



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԻՂՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ**

« 10 » 05 2021թ.

№ 08/ԼԱ/ - 304

2021թ. մայիսի 3-10-ը դիտված հիդրոոդերևութաբանական  
պայմանները ՀՀ-ում

Մայիսի 5-ին, 7-ի և 9-ի ցերեկը շրջանների զգալի մասում, մնացած օրերին առանձին շրջաններում դիտվել է անձրև և ամպրոպ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Գորիսում՝ 57մմ, Մասրիկում, Սեմյոնովկայում՝ 43-45մմ, Ամասիայում, Տաշիրում, Ստեփանավանում, Ֆանտան՝ 36-38մմ, Իջևանում, Դիլիջանում՝ 33-34մմ, մնացած շրջաններում 20-25մմ քանակությամբ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը մայիսի 3-4-ին նորմայից բարձր է 3-6, մայիսի 5-7-ին՝ եղել է նորմայի սահմաններում, 8-9-ին եղել է նորմայից բարձր 1-2 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է մայիսի 4-ին և Սյունիքի հովիտներում գրանցվել է +28...+31°C, Արարատյան դաշտում՝ +27...+29°C, Տավուշում՝ +25...+27°C, Կոտայքի, Արագածոտնի, Վայոց Ձորի նախալեռներում՝ +24...+26°C, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +18...+22°C, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Վայոց Ձորի և Արագածոտնի լեռներում՝ +15...+20 (Գյումրի՝ +23°C) աստիճան տաքությամբ:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է Շիրակում, Արագածոտնի լեռներում, Գեղարքունիքում, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում, Լոռիում՝ 0...+5°C (Աշոցքում՝ -1°C), Արագածոտնի, Կոտայքի, Վայոց Ձորի և Սյունիքի նախալեռներում՝ +7...+10°C, Տավուշում, Արարատյան դաշտում՝ +8...+11°C (Դիլիջանում՝ +1°C), Սյունիքի հովիտներում՝ +10...+12°C աստիճան:

Մայիսի 5-ին Ֆանտանում դիտվել է ուժեղ անձրև՝ 30մմ 12 ժամվա ընթացքում:

Ապրիլի 9-ին Գյումրիում (10մմ), Սեմյոնովկայում (14մմ), Վանաձորում (7մմ), Որոտանի լ/ք-ում (8մմ) դիտվել է կարկուտ: Մայիսի 9-ին առանձին վայրերում դիտվել է քամի՝ 14-16/վրկ, պոռթկումները՝ մինչև 19-24մ/վրկ արագությամբ:

Մայիսի 10-ի դրությամբ ձյան ծածկ է ձևավորվել Ամասիայում, Աշոցքում՝ 1սմ, Ծաղկահովտում՝ 2սմ բարձրությամբ: Արագած բարձր լեռնայինում ձյան ծածկը կազմում է 107սմ:

Շաբաթվա ընթացքում շարունակվել են դաշտային աշխատանքները, եղանակային պայմաններն այնքան էլ նպաստավոր չեն եղել, հաճախակի դիտված տեղումները դժվարեցրել են այն իրականացնել: Գյումրիում, Վանաձորում դիտվել է կարկուտ, լեռնային մի շարք շրջաններում մայիսի 9-ի լույս 10-ի գիշերը թաց ձյուն:

Լեռնային և նախալեռնային շրջաններում աշնանացան ցորենը գտնվել է ցողունակալման փուլում, իսկ գարնանացան գարու մոտ առաջացել է երրորդ տերևը:

Հովտային շրջաններում շարունակվել է պտղատուների պտուղների ձևավորման գործընթացը, աշնանացան ցորենի ծեղացողունի ներքին հանգույցները, խաղողի վազի ծաղկաբույլերի առաջացումը:

Դաշտերում և այգիներում կատարվել է փխրեցում, թունաքիմիկատներով մշակում և հերթական վեգետացիոն ոռոգում:

Մայիսի 3-4-ին հանրապետության գետերում դիտվել է փոփոխական ռեժիմ: Մայիսի 5-6-ին՝ հանրապետության գետերում դիտվել է ջրի ելքերի մեծացում, իսկ մայիսի 7-9-ին՝ նվազում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 5 սմ-ով (02.05-09.05.2021թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.80մ (09.05.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 16 սմ-ով:

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար



Լ.Ագիգյան